## ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

### Ընդհանուր դրույթներ

Նորակառույց դպրոցը գտնվում է Շիրակի Մարզի Վարդաքար գյուղում,ներկյիս գործող դպրոցի տարածքում: Գոյություն ունեցող դպրոցը մեկ հարկանի է և գտնվում է վթարային վիճակում: Այն չի համապատասխանում ներկայումս գործող կրթական նորմերի, ուստի այն ենթակա է ապամոնտաժման: Նոր դպրոցը տեղադրվում է ապամոնտաժվող շենքի տեղը: Դպրոցի տարածքում առկա են` մեկհարկանի քարաշեն սանհանգույց, պահեստի քարաշեն մեկհարկանի շինություն: Դպրոցի տարածքը ցանկապատված է: Աշակերտների թիվը հասնում է 100-ի:

### Ճարտարապետահատակագծային լուծումներ

Նախագծվող նոր դպրոցը բաղկացած է երկհարկանի: Դասասենյակների, ուսումնական և օժանդակ սենքերի քանակները և մակերեսները նախատեսված են համաձայն «Հանրակրթական նշանակության շենքեր» ,«Հասարակական շենքեր» ՀՀՇՆ –ի: Ուսումնական մասնաշենքի հիմքերը ժապավենաձեվ են: Պատերը իրականացված են Արթիքի քարհանքի սրբատաշ տուֆից: Ծածկերը` անցքավոր ե/բ սալերից: Տանիքը լանջավոր է, փայտե հենակմախքով և կավարամածով: Տանիքի ծածկույթը իրականացված է 0.55մմ հաստության պրոֆիլավոր թիթեղով , կազմակերպված ջրահեռացումով: Դռները և պատուհանները մետաղապլաստե, սպիտակ, 60մմ հաստության պրոֆիլով, ապակեփաթեթով: Արտաքին դռները և վիտրաժները` սպիտակ ալյումինե պրոֆիլից: Արտաքին ալյումինե դռները և արտաքին վիտրաժների պրոֆիլները նախատեսվում են ջերմակամրջակով: Բոլոր դռների համար նախատեսված են հատակին ամրացվող արգելակիչներ: Պատուհանագոգերը` պլաստմասե, Հայաստանի արտադրության: Ներքին դռները`խուլ: Հատակների ծածկույթները դասասենյակներում եվ աշխատասենյակներում իրականացնել 2մմ հաստ. վինիլային ծածկույթով: Միջանցքներում հատակները իրականացնել մամլոգրանիտից, սանհանգույցներում` կերամիկականսալիկներով փայլատ մակերեսով: Ներքին հարդարումը իրականացնել լավորակ նյութերով:

### Տարածքի բարեկարգում

Նոր կառուցվող մասնաշենքերի շուրջը իրականացվում է մայթի սալվածք: Սալվածքում իրականացվում են բետոնից եզրաքարեր: Մասնաշենքերի շուրջը իրականացվում է 3.5մ լայնության ճանապարհ հրշեջ ավտոմեքենաների համար: Տարածքը ցանկապատվում է մետաղական ցանկապատով:

### Ինժեներական լուծումներ

Դպրոցի ջեռուցումը իրականացվում է նոր կառուցվող կաթսայատնից: Կաթսայատունը շահագործվելու է բնական գազով: Ջեռուցող մարտկոցները ալյումինե, խողովակները մետաղապլաստ:
Նախագծով դպրոցում կազմակերպվում են սանհանգույցներ աշակերտների և ուսուցիչների համար: Մարզահանդերձարաններում տեղադրվում են ցնցուղարաններ: Դասասենյակներում տեղադրվում են լվացարաններ :
Ջրամատակարարումը իրականացվում է տարածքով անցնող խողովակաշարից:
Գյուղում կոյուղագիծ բացակայելու պատճառով դպրոցի կեղտաջրերի հեռացումը իրականացվում է սեպտիկ ռեզերվուարի միջոցով: Շենքի էլ. սնուցումը իրականացվում է մոտակա էլ.ենթակայանից:

### Տեխնիկա-տնտեսական ցուցանիշներ

| | |
|---|---|
| **Աշակերտների քանակը** | **- 100աշակերտ** |
| **Հողատարածքի մակերեսը** | **-1,17 հա** |
| **Շենքի հարկայնությունը** | **-2 հարկ** |
| **Կառուցապատման մակերեսը** | **- 554.0 քմ** |
| **Ընդհանուր մակերեսը** | **- 920.0 քմ** |
| **Օգտակար մակերեսը** | **- 783.6 քմ** |
| **Շինարարական ծավալը** | **- 4251.0 խմ** |

YERANG LLC Architectural designing and construction

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| ՆԳճ | Մ.ԵՇԻԼԲԱՇՅԱՆ | | | ՊԱՏՎԵՐ 05-14 | ԱԼԲՈՄ 1 | ՄԱՍ Ճ |
| ՆԱԽԱԳԾ | Մ.ԵՇԻԼԲԱՇՅԱՆ | | | | | |
| | | | | ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՔԱՐԻ 100 ՏԵՂԱՆՈՑ ԴՊՐՈՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ | | |
| | | | | ՓՈՒԼ | ԹԵՐԹ | ԹԵՐԹԵՐ |
| | | | | Ա.Ն. | - | 1 |
| ԱՄՍԱԹԻՎ | ԳՈՒՅՔԱՀԱՄԱՐ | ԹԻՎ ԱՐԽԻՎ | | ԲԱՑԱՏՐԱԳԻՐ | «ԵՐԱՆԳ» ՍՊԸ | |